ԵՐԿՐՈՐԴ ԸՆԹԵՐՑՈՒՄ

Նախագիծ

Կ-622-03.10.2014,12.11.2014-ՍՀ-010/2

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ

Օ Ր Ե Ն Ք Ը

«ԺԱՄԱՆԱԿԱՎՈՐ ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՄԱՍԻՆ» ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՕՐԵՆՔՈՒՄ ԼՐԱՑՈՒՄՆԵՐ ԵՎ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հոդված 1. «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության 2010 թվականի հոկտեմբերի 27-ի ՀՕ-160-Ն օրենքի (այսուհետ՝ Օրենք) վերնագիրը «ԱՆԱՇԽԱՏՈՒՆԱԿՈՒԹՅԱՆ» բառից հետո լրացնել «ԵՎ ՄԱՅՐՈՒԹՅԱՆ» բառերով:

Հոդված 2. Օրենքի 1-ին հոդվածում՝

1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ

«1. Սույն օրենքը կարգավորում է վարձու աշխատողի եւ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վարձու աշխատողների եւ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստի հասկացությունը, ժամանակավոր անաշխատունակության նպաստի տեսակները, վարձու աշխատողների եւ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման պայմաններն ու կարգը:»,

2. 2-րդ մասում «դրամական եւ նյութական բավարարումները» բառերը փոխարինել «վարձատրությունը» բառով,

3. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Չաշխատող (վարձու աշխատող եւ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ չհանդիսացող) անձին մայրության նպաստի տրամադրման, նշանակման եւ վճարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով:»:

Հոդված 3. Օրենքի 2-րդ հոդվածի վերնագրում «Ժամանակավոր անաշխատունակության նպաստի» բառերը փոխարինել «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների» բառերով, 1-ին մասում՝ «Ժամանակավոր անաշխատունակության նպաստին» բառերը փոխարինել «Ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստներին» բառերով, իսկ «սույն օրենքով» բառը փոխարինել «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով, սույն օրենքով» բառերով:

Հոդված 4. Օրենքի 3-րդ հոդվածի՝

1. վերնագիրը «տեսակները» բառից հետո լրացնել «, մայրության նպաստի հասկացությունը» բառերով.

2. 1-ին մասից հանել «կամ ամբողջությամբ» բառերը.

3. 2-րդ մասից հանել «(այսուհետ՝ նպաստ)» բառերը.

4. 2-րդ մասի 4-րդ կետը ճանաչել ուժը կորցրած.

5. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 3-րդ մասով.

«3. Մայրության նպաստի միջոցով Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի (արձակուրդի իրավունք ունենալու) ժամանակահատվածում մասնակիորեն կամ ամբողջությամբ փոխհատուցվում է սույն օրենքի 4-րդ հոդվածով սահմանված անձանց հղիության եւ ծննդաբերության պատճառով առաջացած ժամանակավոր անաշխատունակության հետեւանքով կորցրած աշխատավարձը (եկամուտը), որն անձը ստանում էր կամ կարող էր ստանալ:»:

Հոդված 5. Օրենքի 4-րդ հոդվածում՝

1. 1-ին մասում «Նպաստի» բառը փոխարինել «Սույն օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստի (այսուհետ՝ նպաստ)» բառերով, իսկ 1-ին մասի 1-ին կետում «ֆիզիկական անձինք» բառերից հետո ավելացնել «, բացառությամբ ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների» բառերը.

2. 2-րդ մասում «նպաստի» բառը փոխարինել «սույն օրենքով սահմանված՝ ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստի » բառերով.

3. 3-րդ մասում «նպաստները» բառը փոխարինել «ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստները» բառերով, իսկ «դրանց ստանալու իրավունքն» բառերը փոխարինել «ժամանակավոր անաշխատունակությունն» բառերով.

4. 4-րդ մասում.

1) «ժամանակահատվածի» բառը փոխարինել «, իսկ մայրության նպաստը՝ Հայաստանի Հանրապետության աշխատանքային օրենսգրքով սահմանված՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի» բառերով, իսկ «(աշխատանքից ազատվելը),» բառերը փոխարինել «(աշխատանքից ազատվելը՝ անկախ աշխատանքային պայմանագրի տեսակից) կամ» բառերով,

2) լրացնել հետեւյալ բովանդակությամբ նոր նախադասությամբ.

«Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին մայրության նպաստը տրվում է ժամանակավոր անաշխատունակության թերթիկով վավերացված հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածում գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու դեպքում՝ գործունեությունը ժամանակավորապես դադարեցնելու օրվանից:».

5. 6-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«6. Համատեղությամբ աշխատելու դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում, նշանակվում եւ վճարվում է յուրաքանչյուր գործատուի եւ Հայաստանի Հանրապետության կառավարության լիազորած պետական մարմնի (այսուհետ՝ լիազոր մարմին) կողմից՝ անկախ մյուսների կողմից նպաստը նշանակելու եւ վճարելու հանգամանքից: Համատեղությամբ աշխատելու դեպքում (այդ թվում՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող վարձու աշխատողի դեպքում) մայրության նպաստը հաշվարկվում եւ վճարվում է հիմնական գործատուի կողմից:»:

Հոդված 6. Օրենքի 6-րդ հոդվածի 2-րդ մասում՝

1. «Բացառությամբ հղիության եւ ծննդաբերության նպաստի՝ վարձու աշխատողի նպաստը» բառերը փոխարինել «Վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստը» բառերով, իսկ «երեք» բառը փոխարինել «հինգ» բառով.

2. վերջին պարբերությունը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Ինքնուրույնաբար իրենց աշխատանքով ապահոված անձանց ժամանակավոր անաշխատունակության նպաստները, ինչպես նաեւ սույն օրենքով սահմանված մայրության նպաստը վճարվում են պետական բյուջեի միջոցների հաշվին (բացառությամբ՝ սույն օրենքի 22-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված դեպքերի):»:

Հոդված 7. Օրենքի 7-րդ հոդվածում, 11-րդ հոդվածի վերնագրում «հղիության ու ծննդաբերության» բառերը փոխարինել «մայրության» բառով:

Հոդված 8. Օրենքի 11-րդ հոդվածի՝

1. 3-րդ մասում «հղիության ու ծննդաբերության նպաստը» բառերը փոխարինել «մայրության նպաստը» բառերով,

2. 1-ին եւ 2-րդ մասերում, 5-րդ մասի առաջին եւ երկրորդ նախադասություններում «հղիության ու ծննդաբերության նպաստ» բառերը փոխարինել «մայրության նպաստ» բառերով,

3. 1-ին մասում, 2-րդ մասի առաջին եւ երկրորդ նախադասություններում, 3-րդ մասում «աշխատանքային օրերի» բառերը փոխարինել «օրացուցային օրերի» բառերով,

4. 5-րդ մասում «աշխատանքային օրերի համար՝ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական դառնալը (երկու եւ ավելի երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ 110 օրական դառնալը)» բառերը փոխարինել «օրացուցային օրերի համար՝ երեխայի ծնվելու օրվանից մինչեւ նորածնի 70 օրական դառնալը (երկու եւ ավելի երեխա ծնվելու դեպքում՝ մինչեւ 110 օրական դառնալը)» բառերով:

Հոդված 9. Օրենքի 13-րդ հոդվածի՝

1. 1-ին մասում «նպաստ չի տրվում, բացառությամբ հղիության եւ ծննդաբերության նպաստի» բառերը փոխարինել «ժամանակավոր անաշխատունակության նպաստ չի տրվում» բառերով, իսկ «նպաստը» բառը՝ «ժամանակավոր անաշխատունակության նպաստը» բառերով.

2. 2-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«2. Մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում գտնվելու դեպքում վարձու աշխատողներին մայրության նպաստը տրվում է ընդհանուր հիմունքներով՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի համար, բայց ոչ ավելի, քան մինչեւ աշխատողի աշխատանքի անցնելը:»:

Հոդված 10. Օրենքի 14-րդ հոդվածում.

1. 1-ին մասում «աշխատողին նպաստ» բառերը փոխարինել «աշխատողին ժամանակավոր անաշխատունակության նպաստ» բառերով,

2. լրացնել հետեւյալ բովանդակությամբ 2-րդ մասով.

«2. Աշխատանքից ազատման օրինականության մասին վեճի դեպքում վարձու աշխատողին մայրության նպաստ տրվում է ժամանակավոր անաշխատունակության՝ գործատուի որոշման կամ դատարանի վճռի հիման վրա վարձու աշխատողին

աշխատանքում վերականգնվելու օրվանից սկսած ժամանակահատվածի օրացուցային օրերի համար:»:

Հոդված 11. Օրենքի 15-րդ հոդվածի 1-ին մասում հանել «աշխատանքային օրերի» բառերը:

Հոդված 12. Օրենքի 16-րդ հոդվածի 1-ին մասը ուժը կորցրած ճանաչել:

Հոդված 13. Օրենքի 17-րդ հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «հղիության եւ ծննդաբերության» բառերը փոխարինել «մայրության» բառով:

Հոդված 14. Օրենքի 20-րդ հոդվածի վերնագրում եւ 1-ին մասում «հղիության ու ծննդաբերության» բառերը փոխարինել «մայրության» բառով:

Հոդված 15. Օրենքի 22-րդ հոդվածը շարադրել հետեւյալ խմբագրությամբ.

«Հոդված 22. Ժամանակավոր անաշխատունակության, մայրության նպաստը եւ միջին ամսական աշխատավարձը (եկամուտը) հաշվարկելու կարգը

1. Վարձու աշխատողի եւ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից (եկամտից):

2. Վարձու աշխատողի եւ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձի (եկամտի) ութսուն տոկոսից:

3. Եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը) գերազանցում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ «Նվազագույն ամսական աշխատավարձի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 1-ին հոդվածով

սահմանված չափի եւ նվազագույն ամսական աշխատավարձի նկատմամբ հաշվարկված եկամտային հարկի հանրագումարի (այսուհետ՝ նվազագույն ամսական աշխատավարձ) տասնապատիկը, ապա ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի տասնապատիկից:

4. Եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական եկամուտը կամ ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական եկամտից հաշվարկված տոկոսաչափը գերազանցում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հնգապատիկը, ապա ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի հնգապատիկից:

5. Եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վարձու աշխատողին տրվող մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը գերազանցում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի տասնհինգապատիկը, ապա վարձու աշխատողի մայրության նպաստը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձի տասնհինգապատիկից:

6. Եթե սույն օրենքով սահմանված կարգով հաշվարկված՝ վարձու աշխատողի կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի մայրության նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը կամ եկամուտը պակաս է նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսից, ապա մայրության նպաստը հաշվարկվում է նվազագույն ամսական աշխատավարձի հիսուն տոկոսից:

7. Վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու ամսվան նախորդող տասներկու

հերթական օրացուցային ամիսների (այսուհետ՝ հաշվարկային ժամանակահատված) համար տվյալ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտը տասներկուսի բաժանելու միջոցով: Սույն մասի իմաստով եկամուտ են համարվում սույն օրենքով սահմանված նպաստը, ինչպես նաեւ եկամտային հարկի հաշվարկման օբյեկտ համարվող՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված աշխատավարձը եւ դրան հավասարեցված այլ վճարումները:

8. Սույն օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված դեպքում մայրության նպաստը նշանակելու (հաշվարկելու) համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս սույն հոդվածի 7-րդ մասով սահմանված եկամտում հաշվի են առնվում նաեւ մնացած գործատուների կողմից հաշվարկային ժամանակահատվածի համար վարձու աշխատողին վճարված (վճարման ենթակա) եկամուտը (իսկ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող վարձու աշխատողի դեպքում՝ նաեւ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված եկամուտը), եթե վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ այդ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ է (կամ ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ հանդիսացել է ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ): Այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկատվությունը հիմնական (նպաստը հաշվարկող եւ նշանակող) գործատուին է ներկայացնում է վարձու աշխատողը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա: Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձ հանդիսացող վարձու աշխատողը սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված եկամուտի մասին տեղեկատվությունը հիմնական (նպաստը հաշվարկող եւ նշանակող) գործատուին է ներկայացնում է սույն օրենքի 25-րդ հոդվածի 1-ին մասով սահմանված տեղեկանքի հիման վրա: Սույն մասով սահմանված դեպքում այլ գործատուի վճարած եկամուտը եւ սույն հոդվածի 11-րդ մասով սահմանված եկամուտը միջին ամսական աշխատավարձում հաշվառելու պայմաններն ու կարգը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

9. Հաշվարկային ժամանակահատվածի այն ամիսների համար, որոնց ընթացքում վարձու աշխատողը եղել է մինչեւ երեք տարեկան երեխայի խնամքի արձակուրդում (այսուհետ՝ խնամքի արձակուրդ), որպես եկամուտ հաշվառվում է խնամքի արձակուրդն

սկսվելու ամսվան նախորդող ամսին աշխատանքային պայմանագրով կամ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ տվյալ վարձու աշխատողի համար սահմանված հիմնական աշխատավարձը:

10. Մայրության նպաստը հաշվարկելիս, եթե ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ վարձու աշխատողի՝ տվյալ գործատուի մոտ աշխատելու ժամանակահատվածը պակաս է տասներկու ամսից, ապա վարձու աշխատողի միջին ամսական աշխատավարձը հաշվարկելիս հաշվի է առնվում նաեւ հաշվարկային ժամանակահատվածում այլ գործատուի՝ մինչեւ տվյալ գործատուի մոտ աշխատանքի անցնելը վճարված եկամուտը, եթե վարձու աշխատողը ժամանակավոր անաշխատունակությունը առաջանալու օրվա դրությամբ այդ գործատուի հետ աշխատանքային հարաբերությունների մեջ չէ: Ընդ որում, հաշվարկային ժամանակահատվածի մեկ ամսվա համար կարող է հաշվառվել մեկ գործատուի կողմից վարձու աշխատողին վճարված եկամուտը: Այլ գործատուի վճարած եկամտի մասին տեղեկատվությունը ներկայացնում է վարձու աշխատողը՝ Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով լիազոր մարմնի տված տեղեկանքի հիման վրա:

11. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի միջին ամսական եկամուտը հաշվարկվում է ժամանակավոր անաշխատունակության դեպքի տարվան նախորդող տարվա՝ օրենքով սահմանված եկամտային հարկով հարկվող օբյեկտ համարվող եկամուտը, բացառությամբ «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 4-րդ մասով սահմանված եկամուտների, տասներկուսի բաժանելու միջոցով: Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի կողմից ժամանակավոր անաշխատունակության դեպքի տարվան նախորդող տարվա ընթացքում «Եկամտային հարկի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 10-րդ հոդվածի 8-րդ մասի համաձայն՝ եկամտային հարկ վճարած յուրաքանչյուր ամսվա համար որպես եկամտային հարկով հարկվող օբյեկտ համարվող եկամուտ ընդունվում է ժամանակավոր անաշխատունակությունն առաջանալու օրվա դրությամբ սահմանված նվազագույն ամսական աշխատավարձը:

12. Վեցօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք

ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված չափը) բաժանվում է 25-ի եւ բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի երկրորդ աշխատանքային օրվանից սկսած աշխատանքային օրերի թվով:

13. Հնգօրյա աշխատանքային շաբաթվա դեպքում վարձու աշխատողի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (միջին ամսական աշխատավարձից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 3-րդ մասով սահմանված չափը) բաժանվում է 21-ի եւ բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության ժամանակահատվածի երկրորդ աշխատանքային օրվանից սկսած աշխատանքային օրերի թվով:

14. Ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի ժամանակավոր անաշխատունակության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական եկամտից հաշվարկված տոկոսաչափը կամ սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված չափը) բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) եւ բազմապատկվում ժամանակավոր անաշխատունակության օրացուցային օրերի թվով:

15. Մայրության նպաստի չափը հաշվարկելու համար հիմք ընդունվող մեծությունը (սույն հոդվածով սահմանված կարգով հաշվարկված միջին ամսական աշխատավարձը կամ եկամուտը, կամ սույն օրենքով սահմանված դեպքերում՝ սույն հոդվածի 4-րդ, 5-րդ եւ 6-րդ մասերով սահմանված համապատասխան չափը) բաժանվում է 30.4-ի (մեկ ամսվա միջին օրերի) եւ բազմապատկվում հղիության եւ ծննդաբերության արձակուրդի ժամանակահատվածի (ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձին մայրության նպաստ նշանակելու դեպքում՝ հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունք ունենալու ժամանակահատվածի) օրացուցային օրերի թվով:

16. Սույն հոդվածի 5-րդ մասով սահմանված չափը գերազանցող գումարից մայրության նպաստը նշանակելու (հաշվարկելու) եւ գործատուի միջոցներից վճարելու հետ կապված հարաբերությունները կարգավորվում են գործատուների կնքած կոլեկտիվ եւ

աշխատանքային պայմանագրերով կամ աշխատանքի ընդունման մասին անհատական իրավական ակտով:»:

Հոդված 16. Օրենքի 25-րդ հոդվածի՝

1) 1-ին մասում «3-րդ մասով» բառերը փոխարինել «10-րդ մասով» բառերով.

2) 2-րդ մասում «դեպքում նպաստի» բառերը փոխարինել «դեպքում ընտանիքի հիվանդ անդամի խնամքի նպաստի» բառերով:

Հոդված 17. Օրենքի 27-րդ հոդվածի 5-րդ մասը շարադրել հետեւյալ խմբագրությամբ՝

«5. Վարձու աշխատողի հղիության եւ ծննդաբերության արձակուրդն ընդհատվելու կամ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահոված անձի գործունեությունը վերսկսելու դեպքում վճարված մայրության նպաստը վերահաշվարկվում է, եւ ավել վճարված մայրության նպաստի գումարի հետպահումը կատարվում է Հայաստանի Հանրապետության կառավարության սահմանած կարգով՝ բացառությամբ այն դեպքերի, երբ վարձու աշխատողի մայրության նպաստը հաշվարկվել է սույն օրենքի 22-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մեծությունից:»:

Հոդված 18. Օրենքի 28-րդ հոդվածում

1. 1-ին մասի 1-ին կետում «նկատմամբ» բառը փոխարինել «նկատմամբ, այդ թվում՝ սույն օրենքի 4-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված մայրության նպաստի հաշվարկման, նշանակման եւ վճարման ճշտության նկատմամբ» բառերով,

2. 2-րդ մասի 1-ին կետում «2-րդ մասի հինգերորդ պարբերությամբ» բառերը փոխարինել «8-րդ եւ 10-րդ մասերով» բառերով:

Հոդված 19. Եզրափակիչ մաս եւ անցումային դրույթներ

1. Սույն օրենքն ուժի մեջ է մտնում 2015 թվականի հունվարի 1-ին եւ տարածվում է 2015 թվականի հունվարի 1-ին եւ դրանից հետո ծագած իրավահարաբերությունների վրա (այն դեպքերի վրա, երբ ժամանակավոր անաշխատունակությունը կամ հղիության եւ

ծննդաբերության արձակուրդի իրավունքն առաջացել է 2015 թվականի հունվարի 1-ին եւ դրանից հետո):

2. Եթե ժամանակավոր անաշխատունակությունը «հղիության եւ ծննդաբերության արձակուրդի իրավունքը» առաջացել է մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը, ապա ժամանակավոր անաշխատունակության «մայրության» նպաստը եւ նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձը հաշվարկվում են մինչեւ սույն օրենքն ուժի մեջ մտնելը սահմանված կարգով (պայմաններով):

ՏԵՂԵԿԱՆՔ

ՀՀ Ազգային ժողովում 2014 թվականի նոյեմբերի 19-ին 1-ին ընթերցմամբ ընդունված՝ «Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին», «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծերի կապակցությամբ ներկայացված առարկությունների և առաջարկությունների վերաբերյալ

Առարկության, առաջարկության հեղինակը	Առարկության, առաջարկության բովանդակությունը	Եզրակա-ցություն	Կատարված փոփոխությունները
«Պետական նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ			
ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածով առաջարկվող՝ 6.1-րդ գլխի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 1-ին կետը «անձինք» բառից հետո լրացնել «, բացառությամբ սույն մասի 3-րդ կետով սահմանված վարձու աշխատողի» բառերով:	Ընդունվել է:	Հստակեցվում է օրենքում կիրառվող՝ վարձու աշխատող տերմինի բովանդակությունը՝ բացառելով հնարավոր տարընթերցումները:
ՀՀ կառավարություն	Նախագծի 8-րդ հոդվածով առաջարկվող՝ 6.1-րդ գլխի 23.1-ին հոդվածի 1-ին մասի 3-րդ կետում «Սույն օրենքի իմաստով» բառերը փոխարինել «Սույն օրենքի 23.1-ին և 23.2-րդ հոդվածների իմաստով» բառերով	Ընդունվել է:	ՀՀ ԱԺ պատգամավոր Հ. Բաբուխանյանի ներկայացրած առարկությունների համաձայն՝ հստակեցվում է «չաշխատող անձ» հասկացության կիրառության շրջանակը:

Հ. Բաբուխանյան Ընտրատարածք 055	Ավելացնել նոր հոդված հետևյալ բովանդակությամբ. «Հոդված 12. Օրենքի 28-րդ հոդվածի 14-րդ կետի 3-րդ ենթակետի «ծնողի աշխատելու» բառերից հետո լրացնել «, բացառությամբ սույն օրենքի իմաստով չաշխատող անձ համարվող ծնողի, եթե չաշխատող անձի ամսական վարձատրությունը չի գերազանցում նվազագույն աշխատավարձը» բառերով:	Ընդունվել է մասնակի:	Նախագծով առաջարկվում է «Պետական նպաստների մասին» ՀՀ Օրենքի 28-րդ հոդվածի 14-րդ մասի 3-րդ կետը (նախագծի 11-րդ հոդված) «աշխատելու» բառից հետո լրացնել «բացառությամբ քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման աշխատանքներ կատարելու (ծառայություններ մատուցելու)» բառերով: Այս դեպքում, կբացառվի այն անձանց երեխայի խնամքի նպաստի վճարումը դադարեցնելը, ովքեր միանվագ վարձատրություն (եկամուտ) են ստանում են աշխատանքների կատարման (ծառայությունների մատուցման) քաղաքացիաիրավական պայմանագրերի հիման վրա: Միաժամանակ, ՀՀ կառավարության ծրագրին համահունչ, նախատեսվում է առաջիկայում ամբողջական անդրադարձ կատարել մինչև 2 տարեկան երեխայի նպաստի իրավունքին, որի շրջանակներում կքննարկվի նաև առանձին դեպքերում նպաստի իրավունքը եկամտի չափին փոխկապակցելու նպատակահարմարությունը (հնարավորությունը)՝ հաշվի առնելով խնդրո առարկա նպաստի էությունը:
ՀՀ կառավարություն	Նախագծի 11-րդ հոդվածը լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով. «3. Սույն օրենքի 27-րդ և 28-րդ հոդվածների դրույթները չեն տարածվում ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամների	Ընդունվել է:	Հաշվի առնելով ընտանեկան ձեռնարկատիրության և ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամի իրավական կարգավիճակի առանձնահատկությունները՝ առաջարկվում է սահմանել, որ «Պետական նպաստների մասին»

	վրա:»:		Հայաստանի Հանրապետության օրենքի՝ մինչև 2 տարեկան երեխայի նպաստին վերաբերող դրույթները չեն վերաբերում ընտանեկան ձեռնարկատիրության մեջ ներգրավված՝ վարձու աշխատող հանդիսացող ընտանիքի անդամի վրա:
ՀՀ կառավարություն	Նախագծի 12-րդ հոդվածում 1-ին մասից հետո լրացնել հետևյալ բովանդակությամբ նոր մասով՝ ճշտելով մասերի համարակալումը. «3) ամուսինը կամ օրենքով սահմանված կարգով խնամակալ ճանաչված անձը՝ եթե նա զբաղված է մահացած կերակրողի 14 տարին չլրացած՝ սույն հոդվածով նպաստի իրավունք ունեցող երեխայի խնամքով, ըստ Հայաստանի Հանրապետության բնակչության պետական ռեգիստրում առկա տվյալների՝ նրա հետ հաշվառված է նույն բնակության վայրում (հասցեում) և չի աշխատում:»:	Ընդունվել է:	Հստակեցվում է մահացած կերակրողի 14 տարին չլրացած՝ նպաստի իրավունք ունեցող երեխայի խնամքով զբաղված անձի կերակրողին կորցնելու դեպքում նպաստի իրավունքը:
«Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին» ՀՀ օրենքի նախագծի կապակցությամբ			
Հ. Բիշարյան Ընտրատարածք 127 Լ. Դոխոլյան Ընտրատարածք 128	Հանել նախագծի հոդված 16-ի 5-րդ կետը:	Չի ընդունվել:	Առաջարկության ընդունումը հանգեցնում է մայրության նպաստի, որպես սոցիալական քաղաքականության գործիքի սոցիալական բովանդակության խաթարմանը: Հարկ է նշել, որ մայրության նպաստի առավելագույն շեմի կիրառումը ընդունված է նաև միջազգային պրակտիկայում (միջազգային փորձի տեղեկանքը կցվում է):

Հ. Բիշարյան Ընտրատարածք 127 Լ. Դոխոլյան Ընտրատարածք 128	Նախագծի հոդված 16-ի 6-րդ կետի «նվազագույն ամսական աշխա-տավարձի հիսուն տոկոսից» բառերը փոխարինել «նվազագույն ամսական աշխատավարձից» բառերով:	Ընդունվել է մասնակի:	Առաջարկությունը կքննարկվի ՀՀ 2016-2018թթ. ՄԺԾԾ նախագծի մշակման փուլում՝ համապատասխան ֆինանսական ռեսուրսներով ապահովվածության և բյուջետային ծախսերի գերակայությունների համատեքստում:
ՀՀ կառավարություն	Նախագծի 2-րդ հոդվածի 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ. «1. 1-ին մասը շարադրել հետևյալ խմբագրությամբ «1. Սույն օրենքը կարգավորում է վարձու աշխատողի եւ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների տրամադրման հետ կապված հարաբերությունները, սահմանում է վարձու աշխատողների եւ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստի հասկացությունը, ժամանակավոր անաշխատունակության նպաստի տեսակները, վարձու աշխատողների եւ ինքնուրույնաբար իրեն աշխատանքով ապահովված անձի ժամանակավոր անաշխատունակության եւ մայրության նպաստների հաշվարկման, նշանակման և վճարման պայմաններն ու կարգը:»	Ընդունվել է:	Հստակեցվում է «Ժամանակավոր անաշխատունակության նպաստների մասին» ՀՀ օրենքի կարգավորման առարկան՝ օրենքի 1-ին հոդվածը շարադրելով նոր խմբագրությամբ:

Տեղեկանք
Ժամանակավոր անաշխատունակության (մայրության) նպաստի հաշվարկման կարգի՝ միջազգային փորձի վերաբերյալ

Աղբյուրը՝
http://ec.europa.eu/employment_social/missoc/db/public/displayResults.do
http://www.coe.int/t/dg3/socialpolicies/socialsecurity/MISSCEO/tables_en.asp#2012

Ինչպես ցույց է տալիս միջազգային փորձը, աշխարհում գրեթե չկան երկրներ, որտեղ Ժամանակավոր անաշխատունակության պատճառով կորցրած եկամուտը փոխհատուցվում է ամբողջությամբ (100 տոկոսով): Մասնավորապես.

1) Ավստրիայում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին աշխատավարձի 50%-ի չափով, իսկ սկսած հիվանդության 43-րդ օրվանից՝ միջին աշխատավարձի 60%-ի չափով: Մայրության նպաստը վճարվում է նախածննդյան և ետծննդյան 8 շաբաթվա (զույգ երեխայի դեպքում՝ 12 շաբաթվա) համար:

2) Բելգիայում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին աշխատավարձի 60%-ի չափով: Մայրության նպաստը հաշվարկվում է առաջին 30 օրվա համար՝ աշխատավարձի 82 %-ի չափով, իսկ 31-րդ օրվանից սկսած՝ 75 %-ի չափով: Մայրության նպաստը տրվում է առնվազն 6 ամիս վճարումներ կատարելու դեպքում:

3) Բուլղարիայում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին օրական աշխատավարձի 80%-ի չափով, իսկ մայրության նպաստը՝ միջին օրական աշխատավարձի 90%-ի չափով (մայրության նպաստի համար գործում է նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին աշխատավարձի նվազագույն և առավելագույն շեմ):

4) Խորվաթիայում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին աշխատավարձի 70%-ի չափով, իսկ եթե

անաշխատունակությունը կապված է Հայրենիքի պաշտպանության, Կարանտինի, Մինչև 3 տարեկան հիվանդ երեխայի խնամքի հետ՝ ապա նպաստը հաշվարկվում է միջին աշխատավարձի 100 %-ի չափով: Մայրության նպաստը հաշվարկվում է միջին աշխատավարձի 100 %-ի չափով, սակայն սահմանված է Մայրության նպաստի իրավունք տվող նվազագույն ստաժ՝ անընդմեջ 12 ամիս կամ վերջին 2 տարվա ընթացքում՝ 18 ամիս:

5) Կիպրոսում Ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին աշխատավարձի 60%-ի չափով, իսկ մայրության նպաստը՝ միջին աշխատավարձի՝ 72 %-ի (կարող է հաշվարկվել մինչև 100 %-ի չափով, կախված խնամարկյալների քանակից): Գործում է Մայրության նպաստի իրավունք տվող նվազագույն ստաժ՝ 26 շաբաթ:

6) Չեխիայում Ժամանակավոր անաշխատունակության նպաստը տրվում է սկսած 15-րդ օրացուցային օրվանից և հաշվարկվում է միջին օրական աշխատավարձի 60%-ի չափով, իսկ մայրության նպաստը՝ 70 %-ի չափով: Ընդ որում, երկու դեպքում էլ միջին օրական աշխատավարձը հաշվարկելիս օրական աշխատավարձի մինչև 31 եվրո գումարը հիմք է ընդունվում 90 %-ով, 31-47 եվրո գումարը՝ 60 %-ով, 47-94 եվրո գումարը՝ 30 %-ով, իսկ 94 եվրոն գերազանցող գումարը հաշվի չի առնվում: Մայրության նպաստը տրվում է, եթե անձը վերջին 2 տարվա ընթացքում աշխատել է (կատարել է վճարումներ) 270 օր:

7) Էստոնիայում նպաստը տրվում է անաշխատունակության 9-րդ օրվանից սկսած (1-3 օրերը չի վճարվում, 4-8-րդ օրերը վճարում է գործատուն)՝ միջին աշխատավարձի 70 %-ի չափով:

8) Ֆրանսիայում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին միջին աշխատավարձի 50 %-ի չափով, բայց ոչ ավելի քան նվազագույն աշխատավարձի 1.8-ապատիկը կամ օրական շուրջ 43 եվրո (3 երեխա

ունեցողներին՝ սկսած 31-րդ օրվանից աշխատավարձի 66.6 %-ի չափով կամ առավելագույնը օրական շուրջ 57 եվրո):

9) Հունգարիայում մինչև 2 տարվա ստաժի դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին աշխատավարձի 50 %-ի չափով, իսկ 2 տարուց ավելի ստաժի դեպքում՝ միջին աշխատավարձի 60 %-ի չափով: Նպաստի օրական չափը չի կարող գերազանցել նվազագույն աշխատավարձի կրկնակի 1/30-երորդը: Մայրության նպաստը հաշվարկվում է միջին ամսկան աշխատավարձի 70 %-ի չափով, սակայն գործում է Մայրության նպաստի իրավունք տվող նվազագույն ստաժ՝ անընդմեջ 365 օր վերջին 2 տարվա ընթացքում:

10) Լիտվայում ժամանակավոր անաշխատունակության 1-3 օրերի համար նպաստ չի վճարվում, անաշխատունակության 4-7-րդ օրերի համար նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի 40 %-ի չափով, իսկ սկսած 8-րդ օրվանից՝ միջին ամսական աշխատավարձի 80 %-ի չափով: Նպաստի չափը չի կարող պակաս լինել սահմանված մեծության 25 %-ից և գերազանցել այդ մեծության 3.2-ապատիկը: Գործում է Մայրության նպաստի իրավունք տվող նվազագույն ստաժ՝ անընդմեջ 12 ամիս վերջին 24 ամսվա ընթացքում: Միաժամանակ, սահմանված է Մայրության նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի առավելագույն շեմ՝ միջին աշխատավարձի 3.2-ապատիկի չափով:

11) Ռումինիայում ժամանակավոր անաշխատունակության և մայրության նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի 75 %-ի չափով:

12) Ալբանիայում մինչև 10 տարվա աշխատանքային ստաժի դեպքում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի 70 %-ի չափով, իսկ 10 տարուց ավելի աշխատանքային ստաժի

դեպքում՝ միջին ամսական աշխատավարձի 80 %-ի չափով: Մայրության նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի 80 %-ի չափով:

13) Ադրբեջանում նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի՝ 100 %-ի չափով, եթե աշխատանքային ստաժի տևողությունը 8 տարուց ավելի է, 80 %-ի չափով, եթե աշխատանքային ստաժի տևողությունը 5-8 տարի է և 60 %-ի չափով, եթե աշխատանքային ստաժի տևողությունը մինչև 5 տարի է: Սահմանված է առավելագույն շեմ՝ բազային կենսաթոշակի 25-ապատիկի չափով:

14) Չեռնոգորիայում նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի՝ 70 %-ի չափով (100 %-ի չափով, եթե անաշխատունակությունը աշխատանքային խեղման հետևանք է):

15) Մոլդովայում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի՝ 90 %-ի չափով, եթե աշխատանքային ստաժի տևողությունը 8 տարուց ավելի է, 70 %-ի չափով, եթե աշխատանքային ստաժի տևողությունը 5-8 տարի է և 60 %-ի չափով, եթե աշխատանքային ստաժի տևողությունը մինչև 5 տարի է:

16) Ռուսատանի Դաշնությունում ժամանակավոր անաշխատունակության նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի՝ 100 %-ի չափով, եթե աշխատանքային ստաժի տևողությունը 8 տարուց ավելի է, 80 %-ի չափով, եթե աշխատանքային ստաժի տևողությունը 5-8 տարի է և 60 %-ի չափով, եթե աշխատանքային ստաժի տևողությունը մինչև 5 տարի է: Եթե ստաժի տևողությունը մինչև 6 ամիս է, ապա նպաստը հաշվարկվում է նվազագույն աշխատավարձից: Մայրության նպաստը հաշվարկվում է միջին ամսական աշխատավարձի 100 տոկոսի չափով, սակայն սահմանված է Մայրության նպաստը հաշվարկելու համար հիմք ընդունվող միջին ամսական աշխատավարձի առավելագույն շեմ:

17) Շվեյցարիայում սահմանված է Մայրության նպաստի օրական չափի առավելագույն շեմ՝ շուրջ 160 եվրո,

18) Նիդեռլանդներում սահմանված է Մայրության նպաստի օրական չափի առավելագույն շեմ՝ շուրջ 197 եվրո: